Հաստատված է

ԳՊՀ գիտական խորհրդի

2025թ. ապրիլի 25-ի թիվ 11 նիստում

Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան

«25» ապրիլ 2025թ.

ԿԱՐԳ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ

(փոփոխություններով)

Սույն կարգով սահմանվում են Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման պայմանները:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի երկրորդ աստիճանն է, որն ապահովում է բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստում:

2. Համալսարանի մագիստրատուրայում կարող է սովորել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձը՝ մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու, մասնագիտական գործնական, նորարարական, տեխնոլոգիական, հետազոտական ոլորտների զարգացումների ու նոր հնարավորությունների վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու, կարողություններն ու հմտությունները զարգացնելու և ուսումնառության արդյունքում՝ մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար:

II. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Համալսարանի մագիստրատուրայի ընդունելության տվյալ տարվա մասնագիտությունների ցանկը, ՀՀ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ, սահմանված կարգով հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Համալսարանի մագիստրատուրայի տվյալ տարվա ընդունելության ցանկը ներառում է՝

1) մասնագիտությունների ցանկը.
2) ըստ մասնագիտությունների՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)

ընդունելության տեղերի թիվը (անվճար տեղերի առկայության դեպքում).

3) ըստ մասնագիտությունների՝ ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի՝ ուսուցման տեղերը:

4. Համալսարանի կողմից տրվում է հայտարարություն՝ տվյալ ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության մասնագիտությունների, տեղերի և կանոնների վերաբերյալ:

5. Մագիստրատուրայի ընդունելության անցկացման համար Համալսարանի ռեկտորի հրամանով և նախագահությամբ ստեղծվում է ընդունող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են Համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտորը, դեկանները, ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչը, այլ մասնագետներ:

6. Ընդունող հանձնաժողովը, ֆակուլտետի կարծիքի (եթե դիմորդը Գավառի պետական համալսարանի շրջանավարտ է) և գիտելիքների բանավոր ստուգման՝ մեկ համալիր քննության կամ հարցազրույցի արդյունքների հաշվառմամբ, ուսումնասիրում և քննարկում է դիմում-հայտ ներկայացրած անձանց ցուցակները և ըստ մասնագիտությունների, բազային կրթության ընթացքում ուսումնասիրած դասընթացների ցանկի հաշվառմամբ, իրականացնում է մրցույթ:

Համալսարանի ռեկտորը ընդունող հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա հրամանագրում է մրցութային հիմունքներով մագիստրատուրա ընդունված դիմորդներին:

II. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

7. Մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի որակավորում ունեցող ՀՀ քաղաքացիները:

Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները 2-րդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել սահմանված կարգով՝ միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով՝ սեփական նախաձեռնությամբ:

Մագիստրատուրայում օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը կատարվում է գիտելիքների բանավոր ստուգման՝ մեկ համալիր քննության կամ հարցազրույցի անցկացման ձևով:

8. Մագիստրատուրա ընդունվելու համար տրվում է դիմում՝ Համալսարանի ռեկտորի անունով, կցելով համապատասխան փաստաթղթեր՝

1) անձը հաստատող փաստաթուղթը և պատճեն,

2) բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմի և հավելվածի (միջուկի) պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
3) ինքնակենսագրություն և 6 լուսանկար (3 x 4 չափի),
4) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),
5) զինծառայության առնչության վերաբերյալ փաստաթուղթը և պատճեն (արական սեռի դիմորդների դեպքում),
6) երաշխավորագիր ֆակուլտետի խորհրդից (նախորդ տարիների կամ այլ բուհերի շրջանավարտները երաշխավորագիր չեն ներկայացնում),
7) ՀՀ օրենսդրությամբ սահմանված հատուկ արտոնություններից օգտվելու մասին փաստաթուղթը և պատճեն (դրանց առկայության դեպքում),
8) ընդունելության ծառայությունների համար սահմանված վճարի անդորրագիր:

9. Մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է 2 փուլով:

1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն ըստ մասնագիտությունների անցկացվում է ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), տեղերի:

1-ին փուլով մագիստրատուրայի հայտերի ընդունելությունը կատարվում է ընթացիկ տարվա հունիսի 5-ից մինչև հունիսի 20-ը, իսկ ընդունելության 1-ին փուլի գործընթացն ավարտվում է մինչև հունիսի 30-ը: 1-ին փուլի ընդունելությանը կարող են մասնակցել միայն բակալավրիատի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող շրջանավարտները:

Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում ընդունելության մրցույթն անցկացվում է նախ ԳՊՀ բակալավրիատը տվյալ տարում ավարտած համապատասխան բաժինների շրջանավարտների միջև, իսկ թափուր տեղեր առաջանալու դեպքում՝ նաև հարակից մասնագիտությունների, այլ տարիներին համալսարանն ավարտածների կամ այլ բուհերի շրջանավարտների միջև:

2-րդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը, ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ուսուցման տեղերի:

10. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

1) նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով (ՄՈԳ),
2) մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային

միջին գնահատականով կամ ՄՈԳ-ով,

3) տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությունը հաշվի առնելով,

4) ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ ՄՈԳ-ով՝ հաշվի առնելով նաև գիտելիքների բանավոր ստուգման՝ համալիր քննության կամ հարցազրույցի արդյունքները:

11. Համալսարանը մագիստրատուրա ընդունված անձանց հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում դիմորդներին:

IV. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

12. Մագիստրատուրայում ուսուցումը կազմակերպվում է սահմանված կարգով՝ մասնագիտական կրթական ծրագրերին և ուսումնական պլաններին համապատասխան:

13. Մագիստրատուրայի ուսանողները Համալսարանի աշխատողների հետ հավասարապես օգտվում են համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, լաբորատորիաներից, անհրաժեշտության դեպքում՝ հանրակացարանից և այլ հնարավորություններից:

14. Մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց շնորհվում է ավարտական փաստաթուղթ՝ մագիստրոսի դիպլոմ, համապատասխան ներդիրով: